ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/33014-2021

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նարիբեկյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (Պ-013-24.08.2021-ՊԱ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը:

Միաժամանակ հայտնում ենք, որ օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, Վարչապետի 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1059-Ա որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) է նշանակվել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Ա. Սահակյան

Հեռ. 010515826

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-013-24.08.2021-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծով առաջարկվում է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 64-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 1.1 մասով, համաձայն որի՝ զինծառայողների առողջական վիճակի հետազոտումը, փորձաքննությունը և բուժումը կատարվում են առաջնահերթ ու անվճար՝ պետության երաշխավորած բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում:

Հարկ ենք համարում նշել, որ ՀՀ կառավարության 12.04.2018թ. N 405-Ն որոշման պահանջների համաձայն զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննությունն իրականացնում են գերատեսչական հոսպիտալային և կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովները, իսկ քաղաքացիական բժշկական հաստատությունները նման փորձաքննություն չեն իրականացնում: Բացի այդ, օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն՝ զինծառայողները, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ապահովվում են որակյալ բժշկական օգնությամբ՝ համապատասխան գերատեսչական ռազմաբժշկական հաստատություններում, իսկ քաղաքացիական բուժհաստատություններում զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների բժշկական օգնության և սպասարկման հիմքը սահմանված է օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասում, բժշկական օգնության և սպասարկման պայմանները և չափորոշիչները, սոցիալական փաթեթի առողջապահական ուղղությունը սահմանված են ՀՀ կառավարության 2004թ. մարտի 4-ի N 318-Ն, 27.12.2012թ. N 1691-Ն և 2013թ. հուլիսի 25-ի N 806-Ն որոշումներով, դրանց շրջանակներում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնի «Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցումն իրականացվում է հրապարակային օֆերտայի պայմանագրով սահմանված

կարգով՝ պայմանագրային գումարով բյուջեի չսահմանափակման սկզբունքով՝ ֆինանսական փոխհատուցումն իրականացնելով փաստացի մատուցած ծառայությունների ծավալին համապատասխան, որի պարագայում համապատասխան շահառուներին բժշկական օգնությունը և սպասարկումը փաստացի իրականացվում է դիմելու կամ ուղեգրման հիմքով՝ առանց հերթագրման:

Միաժամանակ, օրենքի նախագծով առաջարկվող լրացման բովանդակությունը չի համապատասխանում օրենքի նախագծի հիմնավորմամբ ներկայացված օրենքի նախագծի ընդունման նպատակին, քանի որ փաստացի սահմանում է այլ հարաբերություններ, քան օրենքի 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի կարգավորումներն են, որի արդյունքում օրենքի նախագծի ընդունման պարագայում կստեղծվի իրավիճակ, երբ զինծառայողները, առանց առաջնային կարգով ռազմաբժշկական հաստատություններում հետազոտում և (կամ) բուժում անցնելու, կդիմեն քաղաքացիական բուժհաստատություններ՝ դրանով իսկ խաթարելով թե օրենքի 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի ու դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի պահանջների իրացումը, և թե զինվորական ծառայության պատշաճ կազմակերպման գործընթացը:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում ենք նախագծով լրացվող «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածը թողնել անփոփոխ:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-013-24.08.2021-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի 64-րդ հոդվածը լրացնել նոր՝ 1.1.-ին մասով.

«1.1. Զինծառայողների առողջական վիճակի հետազոտումը, փորձաքննությունը եւ բուժումը կատարվում են առաջնահերթ ու անվճար՝ պետության երաշխավորած բժշկական օգնության եւ սպասարկման շրջանակներում»:»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիներին զինվորական հաշվառման վերցնելու, պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, ներառյալ՝ զորահավաքային զորակոչի, պայմանագրային զինվորական ծառայության եւ վարժական հավաքի ներգրավելու դեպքերում քաղաքացիների հետազոտումը, փորձաքննությունը եւ բուժումը կատարվում են առաջնահերթ ու անվճար՝ պետության երաշխավորած բժշկական օգնության եւ սպասարկման շրջանակներում: Նշված օրենսդրական կարգավորումից, ինչպես նաեւ զինվորական հոսպիտալներ կատարված այցերի արդյունքում պարզվել է, որ զինծառայողների պարագայում առաջնահերթ բժշկական օգնություն եւ սպասարկում նախատեսված չէ, եւ զինծառայողների հետազոտությունն իրականացվում է ընդհանուր հիմունքներով: Արդյունքում, զինծառայողների հետազոտությունները ձգձգվում են, որի հետեւանքով զինվորական հոսպիտալներում նրանց մնալը երկարացվում է: Նշված խնդրին անդրադարձ է կատարվել նաեւ Մարդու իրավունքների պաշտպանի 2019 թվականի տարեկան հաղորդմամբ: Մինչդեռ, հաշվի առնելով զինվորական ծառայության առանձնահատկությունները՝ զինծառայողների բժշկական հետազոտություններն անհրաժեշտ է իրականացնել առաջնահերթ եւ սեղմ ժամկետներում: Խնդիրը պայմանավորված է նաեւ այն հանգամանքով, որ զինվորական հոսպիտալները բավարար չափով հագեցված չեն համապատասխան գործիքային ախտորոշիչ սարքավորումներով (օրինակ՝ ՄՌՏ, ներկերակրափողային էխոկարդիոգրաֆիա, էլեկտրոնեյրոմիոգրաֆիա եւ այլն), կամ առկա սարքավորումների քանակը բավարար չէ զինծառայողների հետազոտությունները պատշաճ իրականացնելու համար (օրինակ՝ հոլտերմոնիտորներ): Ուստի, անհրաժեշտ է նշված հետազոտություններն իրականացնել քաղաքացիական բժշկական հաստատություններում:

Հետեւաբար, վերոնշվածում ներկայացված խնդրի համակարգային կարգավորման համար զինծառայողների առաջնահերթ բժշկական օգնության եւ սպասարկման իրավունքը անհրաժեշտ է ամրագրել «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի մակարդակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1059-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Ջինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-013-24.08.2021-ՊԱ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

24.09.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ